Սույն կայքի միջոցով ապրանքների վաճառքն իրականացվում է MASSIMO DUTTI անվան ներքո՝ «MASTERRETAIL» ՓԲԸ – ի կողմից, գրանցված հասցե՝ Հայաստան, ք. Երևան, 0082, Ծիծեռնակաբերդի խճուղի 3, գրանցված ՀՀ Պետական Ռեգիստրում, ՀՎՀՀ՝ 00878557:

## 3. ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՅՍ ԿԱՅՔԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղեկատվությունը կամ անձնական տվյալները, որոնք դուք տրամադրում եք մեզ, պետք է մշակվեն տվյալների պաշտպանության քաղաքականության համաձայն: Օգտագործելով այս կայքը՝ Դուք տալիս եք անձնական տվյալների մշակման համաձայնություն և հաստատում, որ բոլոր տեղեկությունները և վավերապայմանները ճիշտ են և համապատասխանում են իրականությանը:

## 4. ՄԵՐ ԿԱՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Սույն կայքն օգտագործելիս և դրա միջոցով պատվերներ կատարելիս Դուք համաձայնվում եք՝

I. Օգտագործել այս կայքը միայն ցուցադրված տեսականին դիտելու և իրավաբանորեն վավեր պատվերներ կատարելու համար:

II. Չկատարել կեղծ կամ խարդախ պատվերներ: Եթե հիմնավոր կերպով պարզվի, որ Դուք կատարել եք վերը նշված նպատակներով պատվեր, մենք իրավասու կլինենք չեղարկել այն և տեղեկացնել իրավասու մարմիններին:

iii. Մեզ տրամադրելի վավեր և ճշգրիտ էլեկտրոնային փոստի հասցե, փոստային հասցե և (կամ) այլ կոնտակտային տվյալներ: Բացի այդ, Դուք համաձայնվում եք, որ անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք օգտագործել այս տեղեկատվությունը ձեզ հետ ձեր պատվերի շրջանակներում կապ հաստատելու համար (տե՛ս մեր Գաղտնիության քաղաքականությունը):

Եթե Դուք մեզ չտրամադրեք մեզ անհրաժեշտ ամբողջ տեղեկությունը, չեք կարող կատարել ձեր պատվերը:

Սույն կայքում պատվեր կատարելով՝ հաստատում եք, որ 18 տարեկանից բարձր եք և իրավաբանորեն իրավասու եք կնքել պարտավորություններ առաջացնող պայմանագրեր:

## **5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

Այս կայքում առաջարկվող ապրանքների առաքման ծառայությունը հասանելի է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

## **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ**

Պատվերը ձևակերպելու համար դուք պետք է անցնեք առցանց գնման ընթացակարգը և սեղմեք "հաստատել վճարումը" կոճակը: Դրանից հետո դուք կստանաք էլեկտրոնային նամակ՝ Ձեր պատվերը ստանալու հավաստմամբ (այսուհետ՝ "պատվերի հաստատում"): Դուք կձանուցվեք էլեկտրոնային փոստի միջոցով, որ պատվերն ուղարկվում է ("առաքման հաստատում"): Առաքման հաստատման նամակին կցվելու է էլեկտրոնային անդորրագիր, որը պարունակում է ձեր պատվերի վավերապայմանները (այսուհետ՝ "էլեկտրոնային անդորրագիր") :

## **7. ՍԽԱԼՆԵՐԻ ԾՏԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Եթե Դուք հայտնաբերեք, որ որպես օգտատեր գրանցվելու շրջանակներում անձնական տվյալներ մուտքագրելիս տեղի է ունեցել որևէ սխալ, դուք կարող եք փոխել այդ տվյալները "Տեղեկատվություն իմ մասին" բաժնում:

Ամեն դեպքում, դուք հնարավորություն կունենաք շտկել գնման գործընթացի շրջանակներում տրամադրված անձնական տվյալների հետ կապված սխալները [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև օգտվել մեր գաղտնիության քաղաքականության մեջ նախատեսված ուղղման իրավունքից՝ [dataprotection@inditex.com](mailto:dataprotection@inditex.com): Այս կայքը գնման գործընթացի տարբեր փուլերում պարունակում է հաստատման ենթակա դաշտերը, որոնք թույլ չեն տալիս շարունակել գործընթացը, եթե տրամադրված տեղեկատվության առկա է որևէ սխալ: Բացի այդ, այս կայքը առաջարկում է մանրամասն տեղեկություններ բոլոր ապրանքների մասին, որոնք դուք ավելացրել եք Ձեր Գնումների Չամբյուղում, այնպես որ, նախքան վճարում կատարելը, դուք կարող եք փոխել ձեր պատվերի բովանդակությունը:

Վճարման գործընթացի ավարտից հետո ձեր պատվերի մեջ սխալ հայտնաբերելու դեպքում սխալը շտկելու համար անհապաղ պետք է կապ հաստատել մեր հաճախորդների սպասարկման ծառայության հետ՝ [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլեկտրոնային փոստ միջոցով՝ առկա սխալը շտկելու համար:

## **8. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Արտադրանքի բոլոր պատվերներն ընդունվում են ապրանքի առկայության նախապայմանով: Առաքման ժամանակ դժվարություններ ի հայտ գալու դեպքում կամ, եթե արտադրանքը առկա չէ,



մենք մեզ իրավունք ենք վերապահում Ձեզ ներկայացնել համարժեք կամ ավելի բարձր որակի և արժեքի ապրանքով Ձեր պատվերի փոխարինման վերաբերյալ առաջարկ: Եթե դուք չեք ցանկանում գնել փոխարինման համար առաջարկվող արտադրանքը, Մենք պարտավորվում ենք ամբողջ ծավալով փոխհատուցել ձեզ այն դրամական միջոցները, որոնք դուք վճարել եմ:

## **9. ՊԱՏՎԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ**

Մենք մեզ ենք վերապահում այս կայքից ցանկացած պահի ցանկացած ապրանք հեռացնելու, ինչպես նաև ցանկացած բնյութի կամ բովանդակություն հեռացնելու կամ փոփոխելու իրավունքը: Չնայած այն հանգամանքին, որ մենք գործադրում ենք բոլոր հնարավոր ջանքերը պատվերների մշակման համար, հնարավոր է բացառիկ հանգամանքների առաջացում, որոնք կարող են մեզ հարկադրել մերժել Ձեր պատվերի մշակումը՝ Պատվերի հաստատումն ուղարկելուց հետո: Մենք պահպանում ենք իրավունքը ցանկացած ժամանակ հրաժարվել պատվերի մշակումից՝ վերը նշված հանգամանքների դեպքում:

Մենք որևէ պատասխանատվություն չենք կրում Ձեզ կամ որևէ երրորդ անձին սույն Կայքից որևէ ապրանքի հեռացման կամ սույն Կայքից որևէ նյութի կամ բովանդակության հեռացման կամ փոփոխման կամ պատվերի հաստատումը ձեզ ուղարկելուց հետո պատվերի մշակման մերժման համար:

## **10. ԱՌԱՔՈՒՄ**

Ապրանքների առկայությանը վերաբերող Վերը նշված 8-րդ կետից անկախ, և բացառությամբ արտակարգ հանգամանքների, մենք կփորձենք առաքման յուրաքանչյուր հաստատման մեջ նշված ապրանքից/ ապրանքներից բաղկացած պատվերն ուղարկել մինչև առաքման համապատասխան հաստատման մեջ նշված ամսաթիվը, կամ, եթե առաքման ամսաթիվը նշված չէ, առաքման եղանակի ընտրության ժամանակ ներկայացվող մոտավոր ժամկետներում, և, ամեն դեպքում, ոչ ուշ, քան պատվերի հաստատման օրվանից 30 օրվա ընթացքում:

Այնուամենայնիվ, հնարավոր են ուշացումներ այնպիսի պատճառներով, ինչպիսիք են անկանխատեսելի հանգամանքների առաջացումը:

Եթե որևէ պատճառով մենք չկարողանանք պահպանել առաքման ժամկետը, մենք կտեղեկացնենք Ձեզ դրա մասին և Ձեզ հնարավորություն կտանք՝ սպասելու Ձեր պատվերին՝ նոր առաքման ամսաթիվ սահմանելով կամ չեղարկելու պատվերը՝ վճարված գումարի ամբողջական փոխհատուցմամբ: Ամեն դեպքում, հիշեք, որ մենք չենք առաքում տուն շաբաթ, կիրակի կամ տոն օրերին:

Սույն Պայմանների նպատակներով "առաքման" տակ պետք է հասկանալ կատարված առաքումը կամ "առաքված" պատվերը, երբ դուք կամ ձեր կողմից նշված երրորդ անձը ստանձնեք ապրանքի ֆիզիկական տիրապետումը, որը կհաստատվի ձեր կողմից նշված առաքման հասցեով պատվերի ստացման անդորրագրի ստորագրությամբ:

## **11. ԱՌԱՔՄԱՆ ԱՆՇՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆ**

Եթե մենք չենք կարող հանձնել Ձեր պատվերը, մենք կփորձենք գտնել ապահով վայր՝ այն թողնելու համար: Եթե մենք չկարողանանք գտնել ապահով վայր, Ձեր պատվերը կվերադարձվի մեր պահեստ:

Մենք նաև գրություն կթողնենք, որտեղ կբացատրենք, թե որտեղ է գտնվում ձեր պատվերը և ինչ անել, որպեսզի այն կրկին առաքվի: Եթե դուք չեք գտնվելու առաքման վայրում սահմանված

ժամկետում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ, Առաքման նոր ամսաթիվ համաձայնեցնելու համար:

Եթե պատվերը ստանալու պահից 30 օրվա ընթացքում պատվերը չի կարող առաքվել մեզ հետ չկապված պատճառներով, մենք կհամարենք, որ դուք ցանկանում եք դադարեցնել պայմանագիրը, որի արդյունքում այն կլուծվի: Պայմանագրի լուծման արդյունքում մենք կվերադարձնենք ձեզ ստացված վճարումներն ամբողջ ծավալով, ներառյալ առաքման վճարը (բացառությամբ ցանկացած լրացուցիչ վճարների, որոնք առաջանում են ձեր ընտրությամբ առաքման եղանակից, որը տարբերվում է մեր կողմից առաջարկվող սովորական առաքման եղանակից), ոչ ուշ, քան սույն Պայմանագրի լուծման օրվանից 14 օրվա ընթացքում:

Խնդրում ենք հաշվի առնել, որ պայմանագրի լուծման արդյունքում օգտագործվող տրանսպորտային փոխադրումը կարող է հանգեցնել լրացուցիչ ծախսերի, որոնք մենք իրավասու ենք ստանձնել ձեզ վրա:

## **12. ՌԻՍԿԻ ԵՎ ԱՊՐԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ**

Դուք ստանձնում եք ապրանքի համար պատասխանատվություն վերջինիս առաքման պահից՝ վերը նշված 10 կետին համապատասխան:

Դուք դառնում եք ապրանքի սեփականատեր այն պահից, երբ մենք ստանանք հասանելիք ծախսերի, ներառյալ առաքման ծախսերի ամբողջական վճարումը, կամ առաքման պահից (վերը նշված 10 կետին համապատասխան), եթե վերջինս տեղի ունենա ավելի ուշ:

## **13. ԳԻՆ և ՎՃԱՐՈՒՄ**

Ապրանքների համար գինը այն գինն է, որը համապատասխան պահի դրությամբ հրապարակվել է մեր կայքում, բացառությամբ բացահայտ սխալների: Չնայած այն հանգամանքին, որ մենք գործադրում ենք ամեն ջանք՝ ապահովելու կայքում նշված բոլոր գների նշգրտությունը, այնուամենայնիվ առկա է սխալների առաջացման հավանականություն: Եթե մենք հայտնաբերենք Ձեր կողմից պատվիրած ապրանքներից որևէ մեկի գնի մեջ սխալ, մենք ձեզ կտեղեկացնենք հնարավորինս շուտ և հնարավորություն կտրամադրենք հաստատել Ձեր պատվերը ճիշտ գնով կամ չեղարկել այն: Եթե մեզ չի հաջողվում կապ հաստատել ձեզ հետ, պատվերը համարվում է անվավեր իսկ բոլոր վճարված գումարները պետք է վերադարձվեն ամբողջ ծավալով:

Մենք պարտավոր չենք ձեզ վճարել ապրանքները սխալ (ցածր) գնով (նույնիսկ Առաքման հաստատումն ուղարկելուց հետո), եթե գնի սխալն ակնհայտ էր, ինչը հիմք է տալիս մեզ կարծելու, որ դուք նախապես նկատել եք այդ սխալը:

Մեր կայքում ներկայացված գները ներառում են ԱԱՀ, սակայն չեն ներառում առաքման ծախսերը, որոնք գումարվում են վճարման ենթակա ընդհանուր գումարին՝ համաձայն մեր Առաքման արժեքի ուղեցույցների (տե՛ս Առաքման համար վճարներ):

Գները ենթակա են փոփոխման ցանկացած պահի: Այնուամենայնիվ, փոփոխությունները չեն տարածվում այն պատվերների վրա, որոնց համար արդեն իսկ տրամադրվել է Պատվերի հաստատում:

Բոլոր այն ապրանքները, որոնք ցանկանում եք գնել, ընտրելուց հետո, անհրաժեշտ է ավելացնել ձեր գամբլոդի մեջ: Հաջորդ քայլը պատվերի ամփոփումն ու վճարումն է: Այդ նպատակով դուք պետք է հետևեք գնման գործընթացի քայլերին՝ յուրաքանչյուր քայլում նշելով կամ ստուգելով պահանջվող

տեղեկատվությունը: Բացի այդ, գնումներ կատարելու ընթացքում վճարելուց առաջ կարող եք փոխել ձեր պատվերի բովանդակությունը: Գնումների գործընթացի մանրամասն նկարագրությունը ձեզ տրամադրվում է Գնումների ուղեցույցում: Բացի այդ, եթե դուք գրանցված օգտատեր եք, ձեր տեղադրած բոլոր պատվերների ցանկը հասանելի է «Իմ հաշիվը» բաժնում:

Դուք կարող եք նաև վճարել ձեր պատվերի համար խանութում կամ ձեր պատվերը առաքելիս կանխիկ եղանակով վճարել առաքիչին:

#### **14. ՊԱՏՎԵՐԻ ԷՔՍՊՐԵՍ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ**

Պատվերի Էքսպրես ձևակերպման գործառույթը (այսուհետ՝ "Էքսպրես ձևակերպում") հեշտացնում է ձեր գնումները մեր կայքում, քանի որ պարտադիր չէ մուտքագրել առաքման, վճարման և գանձման վերաբերյալ տեղեկատվություն յուրաքանչյուր պատվերի համար: Էքսպրես ձևակերպումը հասանելի է "Չամբյուղ" բաժնում:

Պատվերի Էքսպրես ձևակերպումից օգտվելու համար դուք պետք է պահպանեք ձեր քարտի տվյալները: Դուք կարող եք դա անել մեր կայքի կողմից ընդունվող ցանկացած տեսակի քարտով վճարում կատարելիս՝ սեղմելով «Պահպանել իմ քարտի տվյալները» կոճակը: Սա կհանգեցնի նրան, որ կպահպանվեն հետևյալ քարտի տվյալները՝ քարտի համարը, քարտապանի անունը ճիշտ այնպես, ինչպես նշված է քարտի վրա և քարտի վավերականության ժամկետը:

Ձեր քարտի տվյալները պահպանելու և էքսպրես ձևակերպման տարբերակից օգտվելու համար դուք պետք է ընդունեք գործող Գաղտնիության քաղաքականությունը և պայմանները:

Համաձայնվելով օգտագործել էքսպրես ձևակերպման տարբերակը՝ Դուք համաձայնություն եք տալիս, որպեսզի կատարվող գնումների դիմաց վճարը գանձվի է Ձեր էջում կցված համապատասխան քարտից: Քարտի օգտագործումը բոլոր դեպքերում կարգավորվում է ձեր և քարտ թողարկողի միջև գրավոր կորպով սահմանված պայմաններով:

Էքսպրես ձևակերպման համար դուք կարող եք պահպանել այնքան քարտերի տվյալներ, որքան կցանկանաք: Դա անելու համար նշված քարտերից յուրաքանչյուրով անհրաժեշտ է կատարել առնվազն մեկ վճարում: Եթե ցանկանում եք պահպանել մեկից ավելի քարտերի տվյալներ, ապա վերջին պահպանված քարտը կդիտվի որպես ձեր «Նախընտրած քարտ», որից ավտոմատ կերպով կկատարվի Էքսպրես ձևակերպման գանձումը: Այնուամենայնիվ, դուք կարող եք փոխել ձեր նախընտրած քարտը մեր կայքի «Իմ անձնական հաշիվը» բաժնում:

Էքսպրես ձևակերպման հնարավորությունն օգտագործելու համար անհրաժեշտ է սեղմել «Էքսպրես ձևակերպում» կոճակին, որը հասանելի է Ձեր Գնումների գամբյուղում: Անմիջապես կհայտնվի համապատասխան պատուհան՝ ձեր գնումների առաքման, գանձման և վճարման վերաբերյալ տեղեկատվությամբ: Այս պատուհանում հասանելի տեղեկությունները չեն կարող խմբագրվել՝ ուստի եթե նշված են սխալ տեղեկություններ, մի հաստատեք գնումը: Տարբեր վավերապայմաններով գնումներ կատարելու համար խնդրում ենք չօգտագործել էքսպրես ձևակերպման տարբերակը:

Դուք կարող եք փոխել էքսպրես ձևակերպման համար նախընտրած քարտը, մեր կայքի «Իմ անձնական հաշիվը» բաժնում:

#### **15. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ**

Համաձայն գործող կանոնների և կանոնակարգերի՝ կայքի միջոցով կատարված բոլոր գնումները ենթակա են հարկման ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ):

## **16. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԳԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐ**

### **16.1. Ապրանքներից հրաժարվելու իրավունք**

#### Ապրանքներից հրաժարվելու իրավունք

Եթե դուք պայմանագիր եք կնքում որպես սպառող, ապա դուք իրավունք ունեք հրաժարվել պայմանագրից 14 օրվա ընթացքում՝ առանց պատճառի հիմնավորման:

Վերադարձի իրավունքի ժամկետը լրանում է ձեր կամ Ձեր կողմից նշած երրորդ անձի կողմից ապրանքը ձեռք բերելու օրվանից 14 օր հետո, իսկ մեկ պատվերի շրջանակներում մի քանի ապրանքների՝ տարբեր ժամանակ առաքման դեպքում՝ յուրաքանչյուր պարանքի նկատմամբ Ձեր կամ Ձեր կողմից նշված երրորդ անձի կողմից նշված ապրանքի նկատմամբ ֆիզիկական տիրապետման ստանձման պահից 14 օր հետո:

Վերադարձի իրավունքից օգտվելու համար դուք կարող եք տեղեկացնել մեզ սույն պայմանագիրը լուծելու ձեր որոշման մասին՝ [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլեկտրոնային փոստի միջոցով: Դուք կարող եք օգտագործել Հավելվածի մեջ մեջ ներկայացված վերադարձի տիպային ձևը, սակայն դա պարտադիր չէ:

Վերադարձի վերջնաժամկետը չխախտելու համար բավական է ուղարկել Ձեր վերադարձի իրավունքի օգտագործման մասին համապատասխան հաղորդագրություն՝ նախքան վերադարձի թույլատրելի ժամկետի լրանալը:

#### Վերադարձի հետևանքները

Եթե դուք որոշեք լուծել սույն պայմանագիրը, մենք պարտավորվում ենք առանց որևէ չհիմնավորված ուշացման վերադարձնել ձեզ Ձեզանից գանձված ամբողջ վճարումները, այդ թվում՝ առաքման վճարը (բացառությամբ ցանկացած լրացուցիչ վճարների, որոնք առաջանում են ձեր ընտրությամբ առաքման եղանակից, որը տարբերվում է մեր կողմից առաջարկվող սովորական առաքման եղանակից),

սույն Պայմանագրի դադարեցման օրվանից 14 օրվա ընթացքում: Նշված դրամական միջոցների Վերադարձն իրականացվելու է կանխիկ եղանակով խանութ-սրահից գնում կատարելու դեպքում, իսկ առաքիչի միջոցով վերադարձ կատարելու դեպքում՝ բանկային փոխանցման միջոցով: Ամեն դեպքում, Դուք չեք կրում որևէ լրացուցիչ ծախսեր՝ կապված դրամական միջոցների վերադարձի հետ: Վերը նշվածից անկախ՝ մենք իրավասու ենք հետաձգել փոխհատուցումն այնքան ժամանակ, քանի դեռ չենք ստացել գնված ապրանքները, կամ մինչև ապրանքի՝ հիմնավոր կերպով ապացուցված հետ վերադարձման պահը՝ կախված նրանից, թե որը տեղի կունենա ավելի վաղ:

Դուք պետք է վերադարձնեք կամ ուղարկեք ապրանքը կամ հանձնեք այն մեզ Հայաստանի Հանրապետության ցանկացած MASSIMO DUTTI խանութ-սրահում, ոչ ուշ, քան մեզ՝ Ձեր կողմից պայմանագիրը լուծելու ցանկության մասին ծանուցման պահից 14 օրվա ընթացքում: Ժամկետը համարվում է պահպանված, եթե ապրանքն ուղարկվում է մեզ մինչև 14-օրյա ժամկետի ավարտը:

Ապրանքը Հայաստանի Հանրապետության MASSIMO DUTTI խանութին չփոխանցելու կամ առաքիչին այնչփոխանցելու դեպքում Դուք կրում եք ապրանքի վերադարձման համար ուղղակի ծախսերը:

Դուք պատասխանատու եք ապրանքների բնույթին, բնութագրերին անհամապատասխան մշակման և պահման արդյունքում դրա արժեքի ցանկացած նվազեցման համար:

## 16.2. Ընդհանուր դրույթներ

Դուք իրավունք չունեք հրաժարվել պայմանագրից, եթե այն վերաբերում է հետևյալ ապրանքներից որևէ մեկի մատակարարմանը՝

i. Անհատականացված առարկաներ

ii. Երաժշտական ձայնասկավառակներ / DVD սկավառակներ առանց օրիգինալ փաթեթավորման:

iii. Չմրսված ապրանքներ, որոնք հիգիենիկ նկատառումներից ելնելով ենթակա չեն վերադարձման և որոնք բացվել են առաքումից հետո:

Պայմանագիրը դադարեցնելու Ձեր իրավունքը տարածվում է բացառապես այն ապրանքների, որոնք վերադարձվում են նույն վիճակում, որով դուք ձեռք եք բերել դրանք: Դրամական միջոցների վերադարձը չի իրականացվի, եթե ապրանքը օգտագործվել է, վերադարձվել է այլ վիճակում, քան այն առաքվել է, կամ եթե ապրանքները վնասվել են: Ուստի, խնդրում ենք հոգ տանել ապրանքների վիճակի մասին, երբ դրանք գտնվում են ձեր տրամադրության տակ: Խնդրում ենք վերադարձնել ապրանքները բնօրինակ փաթեթավորմամբ, հրահանգագրերով և ապրանքներին կցված այլ փաստաթղթերով, եթե այդպիսիք առկա են:

Պատվերի չեղարկման դեպքում համապատասխան ապրանքները վերադարձվում են հետևյալ կերպ՝

(i) Վերադարձ ցանկացած MASSIMO DUTTI խանութում:

Դուք կարող եք վերադարձնել ցանկացած ապրանք ցանկացած MASSIMO DUTTI խանութի համապատասխան բաժնում այն երկրում, որտեղ նշված ապրանքն առաքվել է: Այս դեպքում դուք պետք է մոտենաք խանութ-սրահ և ներկայացնեք էլեկտրոնային անդորրագիրը, որը Դուք ստացել եք առաքման հաստատման հետ միասին, որը նույնպես հասանելի է մեր կայքի Ձեր անձնական հաշվում և MASSIMO DUTTI բջջային հավելվածում: Դուք կարող եք ցույց տալ էլեկտրոնային անդորրագիրը բջջային սարքի էկրանի վրա կամ տպել այն և ներկայացնել խանութ-սրահ:

(ii) Վերադարձ առաքիչի միջոցով՝

Առաքիչի միջոցով ապրանքը(ները) վերադարձնելու դեպքում Դուք պետք է կապ հաստատեք մեզ հետ [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլ. փոստի միջոցով՝ ապրանքի՝ Ձեր տնից հանձնումը կազմակերպելու համար: Դուք պետք է ուղարկեք ապրանքը բնօրինակ փաթեթավորմամբ և հետևեք մեր կայքի "Վերադարձ" բաժնում ներկայացված հրահանգներին:

Վերը նշված երկու տարբերակներից ոչ մեկը ձեզանից որևէ լրացուցիչ ծախս չի պահանջում:

Ապրանքն ուսումնասիրելուց հետո մենք ձեզ կտեղեկացնենք՝ արդյոք իրավունք ունեք հետ ստանալու վճարված գումարները: Առաքման համար գանձումները կվերադարձվեն վերադարձի իրավունքը օրենքով սահմանված ժամկետում կիրառելու և համապատասխան իրերը վերադարձնելու դեպքում: Փոխհատուցումները կտրամադրվեն հնարավորինս սեղմ ժամկետներում՝ պատվերը չեղարկելու մտադրության մասին հայտնելու օրվանից 14 օրվա ընթացքում:

Վերը նշվածից անկախ՝ մենք իրավասու ենք հետաձգել փոխհատուցումն այնքան ժամանակ, քանի դեռ չենք ստացել գնված ապրանքները, կամ մինչև ապրանքի՝ հիմնավոր կերպով ապացուցված հետ վերադարձման պահը՝ կախված նրանից, թե որը տեղի կունենա ավելի վաղ: Գումարի վերադարձն իրականացվելու է բանկային փոխանցման միջոցով:

Հարցերի դեպքում կարող եք կապվել մեզ հետ [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլեկտրոնային փոստի միջոցով:

### **16.3. ոչ պատշաճ որակի արտադրանքի Վերադարձ**

Եթե կարծում եք, որ առաքման պահին ապրանքը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա դուք պետք է անմիջապես կապ հաստատեք մեզ հետ [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլեկտրոնային փոստի միջոցով՝ տրամադրելով մանրամասն տեղեկություններ արտադրանքի և դրա թերությունների մասին:

Գուք կարող եք վերադարձնել ապրանքը Հայաստանի Հանրապետության ցանկացած MASSIMO DUTTI խանութում կամ հանձնել այն առաքիչին, որին մենք կուղարկենք ձեր տուն:

Մենք ուշադիր կուսումնասիրենք վերադարձված ապրանքը և ողջամիտ ժամկետում կտեղեկացնենք Ձեզ էլեկտրոնային փոստով, արդյոք ապրանքը կարող է փոխանակվել կամ արդյոք ունեք փոխհատուցման իրավունք (կախված հանգամանքներից): Ապրանքի վերադարձը պետք է կատարվի հնարավորինս սեղմ ժամկետներում և ցանկացած դեպքում ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում այն օրվանից, երբ մենք ձեզ կուղարկենք էլեկտրոնային նամակ, որով կհաստատենք, որ ապրանքի փոխհատուցումը կամ փոխարինումը հնարավոր է:

Եթե վերադարձված ապրանքների թերությունների կամ վնասվածքների առկայությունը հաստատվում է, մենք ձեզ կվերադարձնենք ամբողջական արժեքը, ներառյալ առաքման և վերադարձի համար կատարված ծախսերը: Գումարի վերադարձն իրականացվելու է բանկային փոխանցման միջոցով:

Գործող օրենսդրությամբ վերապահված բոլոր իրավունքները, ամեն դեպքում, պահպանվում են:

### **17. ՊԱՏԱՍԽԱՆԱԿՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺՎՐՈՒՄ, ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

Եթե այլ բան ուղղակիորեն նշված չէ սույն Պայմանագրում, մեր պատասխանատվությունը մեր կայքից ձեռք բերված ցանկացած ապրանքի նկատմամբ սահմանափակվում է խիստ նշված ապրանքի գնի չափով:

Վերը նշվածից անկախ՝ մեր պատասխանատվությունը չի կարող վերացվել կամ սահմանափակվել հետևյալ դեպքերում՝

- I. մեր անփութության հետևանքով մահվան կամ անձնական վնասի առաջացման դեպքում,
- II. խարդախության կամ դիտավորյալ խաբեության դեպքում, կամ
- iii. ամեն դեպքում, երբ պատասխանատվության վերացումը, սահմանափակումը կամ բացառումը անօրինական է կամ ոչ իրավաչափ:

Չնայած վերը նշված դրույթներին և օրենքով թույլատրելի չափով, Մենք պատասխանատվություն չենք կրում հետևյալ վնասների համար, անկախ դրանց ծագումից, եթե սույն Պայմանագրում այլ բան նշված չէ՝

- I. եկամտի կամ վաճառքի կորուստ,
- II. գործառնական վնաս,
- Iii. շահույթի կամ պայմանագրերի կորուստ,
- iv. կանխատեսված խնայողությունների կորուստ,
- v. սովյալների կորուստ, ինչպես նաև

vi. աշխատանքի կամ դեկավարման ժամանակի կորուստ:

Մեր կայքի բաց բնույթի և թվային տեղեկատվության պահպանման և փոխանցման մեջ սխալների հնարավորության պատճառով մենք չենք երաշխավորում կայքի միջոցով փոխանցվող կամ ստացված տեղեկատվության ճշգրտությունն ու անվտանգությունը, եթե այս կայքում այլ բան նախատեսված չէ:

Ապրանքի բոլոր նկարագրությունները, տեղեկատվությունը և սույն կայքում ներկայացված նյութերը տրամադրվում են «ինչպես կա» սկզբունքով առանց որևէ երաշխիքի, բացառությամբ օրենքով սահմանված պահանջների: Այս համատեքստում, եթե դուք որպես սպառող կամ օգտատեր պայմանագիր եք կնքում, մենք պարտավոր ենք առաքել այնպիսի ապրանքներ, որոնք համապատասխանում են պայմանագրին՝ պատասխանատու լինելով Ձեր առջև առաքման պահին առկա որևէ անհամապատասխանության համար: Ենթադրվում է, որ ապրանքը համապատասխանում է պայմանագրին, եթե այն՝ i) համապատասխանում է մեր տրամադրած նկարագրությանը, ունի այն որակն ու հատկանիշները, որոնք մենք ներկայացրել ենք մեր կայքում: ii) հարմար են այն նպատակների համար, որոնց համար սովորաբար օգտագործվում են նշված տեսակի ապրանքները. (iii) ունեն այնպիսի որակ և հատկանիշներ, որոնք համապատասխան են նույն տեսակի ապրանքների համար, և որոնք ողջամտորեն ակնկալվում են: Օրենքով թույլատրված չափով մենք բացառում ենք բոլոր երաշխիքները, բացառությամբ այն երաշխիքների, որոնք իրավաբանորեն չեն կարող բացառվել:

## 18. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դուք ընդունում և համաձայն եք, որ բոլոր հեղինակային իրավունքները, գրանցված ապրանքային նշանները և մտավոր սեփականության այլ իրավունքները կայքում տրամադրված բոլոր նյութերում կամ բովանդակությունում պատկանում են բացառապես մեզ կամ այն անձանց, ովքեր մեզ թույլ են տալիս օգտագործել դրանք: Դուք կարող եք օգտագործել այս նյութը՝ մեր կամ մեր լիցենզատուների կողմից ուղղակի կերպով վերապահված լիազորություններին համապատասխան: Միևնույն ժամանակ, այս դրույթը չի սահմանափակում ձեզ այս կայքի օգտագործման հարցում՝ Պայմանագրի վերաբերյալ որևէ պատվեր կամ տեղեկատվություն կրկնօրինակելու անհրաժեշտության դեպքում:

## 19. ՎԻՐՈՒՄՆԵՐ, ՀԱԿԵՔԻՆԳ ԵՎ ԱՅԼ ԿԻՔԵՐ-ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք չեք կարող չարաշահել այս կայքը՝ դիտավորյալ կիրառելով վիրուսներ, տրոյացիներ, որդեր, տրամաբանական ռումբեր կամ վնասակար կամ տեխնիկապես վնասակար այլ նյութեր: Դուք պարտավորվում եք չկատարել չարտոնված մուտքի փորձ մեր վեբ կայքին, ինչպես նաև մեր կայքը սպասարկող սերվերներին կամ մեր կայքին վերաբերող որևէ այլ սերվերին, համակարգիչներին կամ տվյալների բազաներին: Դուք պարտավորվում եք չիրականացնել հարձակումներ ցանցային գրոհների և ծառայության մերժման գրոհների միջոցով:

Խախտելով սույն դրույթը՝ Դուք կարող եք կատարել քրեական հանցագործություն՝ իրավական դրույթներին համապատասխան: Մենք պարտավոր ենք ցանկացած նման հանցագործության մասին զեկուցել համապատասխան իրավապահ մարմնին, ուստի՝ մենք կապվելու ենք համապատասխան իրավապահ մարմնի հետ՝ հարձակում հորձադրող անձի ինքնությունը պարզելու համար: Բացի այդ, նման խախտման դեպքում այս կայքից օգտվելու ձեր իրավունքը անմիջապես կդադանցվի: Մենք պատասխանատվություն չենք կրում սույն կայքի կամ վերջինիս կողմից ուղղորդվող որևէ կայքի օգտագործման արդյունքում ցանցի հարձակման, վիրուսի կամ այլ վնասակար ծրագրային ապահովման կամ նյութերի հետևանքով կրած վնասների համար, որոնք տեխնիկապես կարող են վնասել ձեր համակարգիչը, սարքավորումները, տվյալները կամ նյութերը:

## **20. ՀՂՈՒՄՆԵՐ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ**

Եթե մեր կայքը պարունակում է երրորդ անձանց կայքերի և նյութերի հղումներ, ապա այդպիսի հղումները տրամադրվում են բացառապես տեղեկատվական նպատակներով, ուստի՝ մենք չունենք որևէ վերահսկողություն այդ կայքերում տեղադրված բովանդակության կամ նյութերի նկատմամբ: Համապատասխանաբար, Մենք որևէ պատասխանատվություն չենք կրում դրանց օգտագործման հետևանքով առաջացած որևէ վնասի համար:

## **21. ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Համաձայն գործող օրենսդրության, մեր կողմից Ձեզ տրամադրվող որոշակի տեղեկությունը կամ հաղորդագրությունները պետք է ներկայացվեն գրավոր կերպով: Օգտագործելով այս կայքը՝ դուք համաձայն եք, որ մեզ հետ շփումն իրականացվելու է առավելապես էլեկտրոնային եղանակով: Մենք ձեզ հետ կապվելու ենք էլեկտրոնային փոստի միջոցով կամ տրամադրելու ենք ձեզ համապատասխան տեղեկությունը՝ այս կայքում ծանուցումներ տեղադրելով: Պայմանագրի կնքման շրջանակներում Դուք համաձայնվում եք նշված էլեկտրոնային հաղորդակցության միջոցների հետ և ընդունում եք, որ բոլոր պայմանագրերը, ծանուցումները, տեղեկատվությունը և այլ հաղորդագրությունները, որոնք մենք տրամադրում ենք Ձեզ էլեկտրոնային եղանակով, համապատասխանում են այնպիսի օրենսդրության պահանջներին, որոնք նախատեսում են նաև նման հաղորդագրությունների գրավոր ձևակերպում: Սույն դրույթը չի ազդում ձեր օրինական իրավունքների վրա:

## **22. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ**

Ձեր կողմից ուղարկված բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն մեր կայքի և բջջային հավելվածի միջոցով: Համաձայն վերը նշված 22 կետի դրույթների, մենք իրավունք ունենք Ձեզ ուղարկել ծանուցումներ նաև այն էլեկտրոնային փոստի միջոցով, որը դուք մեզ տրամադրել եք պատվերի տեղադրման ժամանակ, եթե այլ բան նախատեսված չէ:

Ենթադրվում է, որ ծանուցումները կստացվեն և կստանան համապատասխան արձագանք՝ կայքում տեղադրվելու պահից, էլ. Փոստով ուղարկելու պահից 24 ժամվա ընթացքում, կամ ուղարկման պահից երեք օրվա ընթացքում: Որպես ապացույց, որ ծանուցումն ուղարկվել է, նամակի դեպքում բավական է ապացուցել, որ այն ճիշտ է հասցեագրվել, որ փոստային ծախսերը վճարվել են, և որ այն պատշաճ կերպով առաքվել է փոստային բաժանմունք կամ փոստարկղ, իսկ էլեկտրոնային նամակի դեպքում՝ ապացուցել, որ այդ ծանուցումը ուղարկվել է ստացողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

## **23. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ**

Պայմանագիրը պարտադիր բնույթ է կրում երկու կողմերի, ինչպես նաև վերջիններիս իրավահաջորդների և ժառանգների համար:

Դուք իրավունք չունեք փոխանցել, զիջել կամ որևէ այլ կերպ օտարել պայմանագիրը կամ դրա շրջանակներում որևէ իրավունք կամ պարտավորություն՝ առանց մեր նախնական գրավոր համաձայնության:

Մենք իրավասու ենք փոխանցել, զիջել, կնքել ենթապայմանագիր կամ ցանկացած այլ եղանակով փոխանցել պայմանագիրը կամ դրանից բխող ցանկացած իրավունք կամ պարտավորություն՝ սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ցանկացած ժամանակ: Տարընկալումներից



խուսափելու համար նշված փոխանցումը, զիջումը կամ օտարման այլ տեսակ չի ազդում ձեզ՝ որպես գնորդի օրենսդրությամբ վերապահված իրավունքների վրա և չի վերացնում, չի նվազեցնում և որևէ այլ կերպ չի սահմանափակում Ձեզ տրամադրված որևէ ուղղակի կամ անուղղակի երաշխիք:

## **24. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ**

Մենք պատասխանատվություն չենք կրում մեր հիմնավորված վերահսկողությունից դուրս իրադարձությունների հետևանքով պայմանագրով մեր որևէ պարտավորությունների չկատարման կամ ուշացման համար (այսուհետ՝ "Փոքր մատր"):

Անհաղթահարելի ուժի հանգամանք է համարվում ցանկացած գործողություն, իրադարձություն է, իրադարձության բացակայություն, գործողություն, անգործության կամ անկանխատեսելի իրավիճակ, որոնք դուրս են մեր հիմնավորված վերահսկողությունից, և մասնավորապես, ներառում է առանց սահմանափակումների հետևյալ հանգամանքները՝

i. գործադուլներ, շրջափակումներ կամ այլ բողոքի ցույցեր:

ii. Քաղաքացիական անկարգություններ, զանգվածային անկարգություններ, ներխուժում, ահաբեկչական հարձակում կամ ահաբեկչական սպառնալիք, պատերազմ (հայտարարված, թե ոչ), պատերազմի վտանգ կամ պատերազմի նախապատրաստում:

iii. Հրդեհներ, պայթյուններ, փոթորիկներ, ջրհեղեղներ, երկրաշարժեր, փլուզումներ, համաճարակներ և բնական այլ աղետներ:

iv. Երկաթուղիների, նավերի, օդանավերի կամ ավտոմեքենաների, ինչպես նաև հասարակական եւ մասնավոր այլ տրանսպորտային միջոցների օգտագործման անհնարինություն:

v. հանրային կամ մասնավոր հեռահաղորդակցության ցանցերի օգտագործման անհնարինությունը:

vi. Ցանկացած կառավարության ակտեր, հրամանագրեր, որոշումներ կամ սահմանափակումներ:

vii. Գործադուլ, անսարքություն կամ վթար ծովային կամ ցամաքային տրանսպորտի, փոստային տրանսպորտի կամ ցանկացած այլ տեսակի տրանսպորտի ոլորտում:

Հարկ է նշել, որ պայմանագրերից բխող մեր պարտավորությունները կատարվելու են այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում գործում են ֆորսմաժորային հանգամանքներ, և մեզ տրվելու է մեր պարտավորության կատարման հետաձգման իրավունք, որը համարժեք է այն ժամանակահատվածին, որի ընթացքում գործում են նման ֆորսմաժորային հանգամանքները: Մենք կգործադրենք ողջամիտ բոլոր ջանքերը ֆորսմաժորային հանգամանքները դադարեցնելու կամ դադարեցման համար լուծում գտնելու համար, որը թույլ կտա մեզ կատարել պայմանագրով մեր կողմից ստանձնած պարտավորությունները՝ անկախ ֆորսմաժորային հանգամանքների:

## **25. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՄ**

Պայմանագրի կամ սույն պայմանների շրջանակներում Ձեր կողմից ստանձնած պարտավորությունների խիստ պահպանման մասին մեր կողմից պահանջի բացակայությունը կամ սույն պայմանագրի կամ պայմանների շրջանակներում մեր կողմից իրավունքների կամ գործողությունների իրականացման բացակայությունը չի հանդիսանում նշված իրավունքներից կամ գործողությունների կատարումից հրաժարում կամ սահմանափակում, ինչպես նաև չի ազատում ձեզ նշված պարտավորությունների կատարումից:

Մեր կողմից որոշակի իրավունքից կամ գործողությունից հրաժարվելը չի նշանակում սույն պայմանագրից կամ պայմաններից բխող այլ իրավունքներից կամ գործողություններից հրաժարում:

Սույն պայմաններից կամ իրավունքներից կամ պայմանագրից բխող գործողություններից մեր կողմից հրաժարվելը ուժի մեջ չի մտնում, եթե այն ուղղակի կերպով չի ներկայացվել որպես հրաժարում և ուղարկվել ձեզ գրավոր եղանակով՝ համաձայն վերը նշված "ծանուցում" կետի:

## **26. ՄԱՍՆԱԿԻ ՉԵՂԱՐԿՈՒՄ**

Եթե սույն պայմաններից որեւէ մեկը կամ պայմանագրի որեւէ դրույթ չեղյալ հայտարարվի համապատասխան մարմնի որոշմամբ, մնացած պայմանները, որոնք չեն հիշատակվում նշված չեղարկման մասին որոշման մեջ, պահպանում են իրենց ուժը:

## **27. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹ**

Սույն Պայմանները և ցանկացած այլ փաստաթուղթ, որն ուղղակի հղում է պարունակում սույն Պայմաններին, ներկայացնում է կողմերի միջև կնքված պայմանագրի առարկայի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների ամբողջ ծավալը և փոխարինում է կողմերի միջև նախկինում ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր եղանակով կնքված բոլոր համաձայնություններին, պայմանավորվածություններին և պայմանագրերին:

Կողմերն ընդունում են, որ համաձայն են կնքել սույն պայմանագիրն մյուս կողմի որևէ հայտարարությունից կամ խոստումից անկախ, որը կարող է բխել կողմերի միջև նախկինում կնքած ցանկացած պայմանագրից, հայտարարությունից կամ փաստաթղթից, բացառությամբ սույն Պայմաններում ուղղակիորեն նշվածների:

Կողմերից ոչ մեկն իրավասու չէ որևէ գործողություն ձեռնարկելու մյուս կողմի՝ մինչև սույն Պայմանագրի կնքման պահը բանավոր կամ գրավոր կերպով կատարած որևէ կեղծ հայտարարության վերաբերյալ (եթե նշված կեղծ հայտարարությունը չի արվել խարդախության նպատակով): Միակ գործողությունը, որը կարող է ձեռնարկվել մյուս կողմի կողմից, պետք է պայմանավորված լինի պայմանագրի խախտմամբ՝ սույն Պայմանների դրույթներին համապատասխան:

## **28. ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Մենք իրավունք ունենք վերանայել և փոխել սույն պայմանները ցանկացած ժամանակ:

Դուք պարտավոր եք պահպանել պատվերի տեղադրման պահի դրությամբ գործող կանոնները և պայմանները, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ պետական մարմինների որոշմամբ մենք պարտավոր ենք հետին թվով փոփոխություններ կատարել նշված քաղաքականության, պայմանների կամ գաղտնիության քաղաքականության մեջ: Այդ դեպքում նման փոփոխությունները գործում են նաև Ձեր կողմից նախկինում տեղադրված պատվերների նկատմամբ:

## **29. ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ**

Սույն վեր-կայքի օգտագործումը և սույն վեր-կայքի միջոցով ապրանքների գնման պայմանագրերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Կայքի կամ նշված պայմանագրերի օգտագործման հետ կապված ցանկացած վեճի լուծման գործընթացները պատկանում են Հայաստանի դատարանների ոչ բացառիկ իրավասությանը:

Եթե Դուք հանդիսանում եք պայմանագրի կողմ որպես գնորդ, ապա սույն կետի ոչ մի դրույթ չի ազդում օրենքով Ձեզ վերապահվախ իրավունքների վրա:

### 30. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐ, ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Ձեր մեկնաբանություններն ու առաջարկությունները միշտ ողջունելի են: Խնդրում ենք ուղարկել ցանկացած մեկնաբանություն և առաջարկություններ [contact.am@massimodutti.com](mailto:contact.am@massimodutti.com) էլեկտրոնային փոստի միջոցով:

#### ՀԱՎԵԼՎԱԾ

Վերադարձի տիպային ձևանմուշ  
(Լրացրեք եւ Վերադարձրեք այս ձևաթուղթը միայն այն դեպքում, եթե ցանկանում եք հրաժարվել պայմանագրից)

Հասցե՝ MASSIMO DUTTI ապրանքանիշի ներքո գործող "MASTERRETAIL" ՓԲԸ, Հասցե՝  
Ծիծեռնակաբերդի խճուղի 3, ք. Երևան 0082, Հայաստան:

Սույնով տեղեկացնում եմ ձեզ, որ լուծում եմ հետևյալ ապրանքների առուվաճառքի  
պայմանագիրը՝

Պատվիրված /ստացված (\*)

Սպառողի անուն՝

Սպառողի հասցե՝

Սպառողի ստորագրությունը (միայն թղթային տարվերակների համար)

Ամսաթիվ՝

(\*) անհրաժեշտության դեպքում ջնջել